ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

26 սեպտեմբեր 2023 թվականի N 830-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՂՆԻՔԻ ԽՈՀԱՆՈՑԻ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սարգիս Առաքելյանի դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Քարակերտ գյուղի Թումանյան փողոց 1 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժիներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սարգիս Առաքելյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Քարակերտ գյուղի Թումանյան փողոց 1 հասցեում գտնվող 0.06 հա օրինական հողամասի վրա 1998 թվականին կառուցված 4.0 քմ ներքին մակերեսով բաղնիքը,1984 թվականին կառուցված 20.3 քմ ներքին մակերեսով խոհանոցը և 1984 թվականին կառուցված 35.3 քմ ներքին մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

2.ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3.Ընդունել ի գիտություն, որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

2)շինությունը կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Քարակերտ գյուղի Թումանյան 1 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 20238PRU5N

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնուն ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 26

Գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250
baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբեր 2023 թվականի N 831-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Շաքրո Արտաշի Սադոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Շաքրո Արտաշի Սադոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը/կադաստրային ծածկագիր 04-045-0018-0028/ տալ << Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գյուղ Լեռնագոգ, Ա. Խաչատրյան փողոց, 73 բնակելի տուն >> հասցեն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2023թվականի սեպտեմբեր 27
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250
baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբեր 2023 թվականի N 832-Ա

ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 105-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Թորոս Հայկազի Բիլբուլյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի ղեկավարի 2019թ նոյեմբերի 20-ի N 105-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. Բաղրամյան համայնքի Հուշակերտ գյուղի, /04-061-0003-0026 / կադաստրային ծածկագրի << Բաղրամյան, գյուղ Հուշակերտ 8-րդ փողոց, 26>> հասցեն փոփոխել << Բաղրամյան, գյուղ Հուշակերտ, 8-րդ փողոց, 16 բնակելի տուն >> հասցեով:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2023թվականի սեպտեմբեր 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250
baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբեր 2023 թվականի N 833-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերի դրույթներով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ գյուղի համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակին/կադաստրային ծածկագիր 04-036-0019-0101/ տալ << Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գյուղ Դալարիկ, Կոմիտասի փողոց, 7 շենք , 20 ավտոտնակ >> հասցեն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2023թվականի սեպտեմբեր 27

գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

27 սեպտեմբեր 2023 թվականի N 834-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՇԱՔՐՈ ԱՐՏԱՇԻ ՍԱԴՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՀԱՎԱԲՆԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ՊԱՐԻՍՊԻ ԵՎ ԾԱԾԿՈՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Շաքրո Սադոյանի դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի Խաչատրյան փողոց 73 հասցեում գտնվող կառույցները իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժիներատրանսպորտային օտարման գոտիներում և

հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Շաքրո Սադոյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի Խաչատրյան փողոց 73 հասցեում գտնվող 0.06 հա օրինական հողամասի վրա 1985 և 1987 թվականին կառուցված 163.2 քմ ներքին մակերեսով բնակելի տուն,1987 թվականին կառուցված 42.0 քմ ներքին մակերեսով ավտոտնակ, 1998 թվականին կառուցված 2.2 քմ ներքին մակերեսով հավաբուն,1987 թվականին կառուցված 20.6 քմ ներքին մակերեսով անասնաշենք,1998 թվականին կառուցված 2.7 քմ պարիսպ, 1987 և 1998 թվականին կառուցված 17.1 քմ ծածկոցը ճանաչել օրինական:

2.ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3.Ընդունել ի գիտություն, որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

2)շինությունը կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի Խաչատրյան փողոց 73 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023W34VHE

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2023 թվականի N 835-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Բաղրամյան համայնքի 2023 թվականի սեպտմբերի 27-ի դիմում հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բաղրամյան համայնքին տալ շինարարության թույլտվություն, Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, գ. Քարակերտ գերեզմանատուն տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ կատարելու համար:
2. Բաղրամյան համայնքը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Բաղրամյան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 28
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2023 թվականի N 836-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Բաղրամյան համայնքի 2023 թվականի սեպտմբերի 27-ի դիմում հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բաղրամյան համայնքին տալ շինարարության թույլտվություն, Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, գ. Քարակերտ Սայրան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ կատարելու համար:
2. Բաղրամյան համայնքը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Բաղրամյան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanhamajnqapetaran@mail.ru
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 837-Ա

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվակինի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Սամվել Վռամի Գևորգյանի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սամվել Վռամի Գևորգյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), իրեն սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր 04-089-0008-0020/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի Ջիվանու փողոց թիվ 17 հասցեում գտնվող բնակելի տանը կից մեկ հարկանի շինության կառուցման աշխատանքներ կատարելու համար:
2. Սամվել Վռամի Գևորգյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. Առաքելյան**

2023 թվականի սեպտեմբերի 28
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanhamajnqapetaran@mail.ru
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 838-Ա

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվակինի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Լենա Ալլի Հասոյանի 2023 թվականի սեպտեմբերի 25-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լենա Ալլի Հասոյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), իրեն սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր 04-089-0002-0040/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի Ա.Մարտիրոսյանի փողոց 35 բնակելի տուն հասցեում գտնվող տնտեսական շինության կառուցման աշխատանքներ կատարելու համար:
2. Լենա Ալլի Հասոյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. Առաքելյան**

2023 թվականի սեպտեմբերի 28
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2023 թվականի N 839-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Ռոբերտ Հովհաննեսի Չարխիֆալաքյանի 2023 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ռոբերտ Հովհաննեսի Չարխիֆալաքյանին տալ շինարարության թույլտվություն, Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, գ.Քարակերտ Հ. Բաղրամյանի փողոց 12բն. տուն /ծածկագիր 04-096-0015-0017/ հասցեում բնակելի տան և պարիսպի կառուցման աշխատանքներ կատարելու համար:
2. Ռոբերտ Հովհաննեսի Չարխիֆալաքյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել թիվ 2-5 ձևի տեղեկանք:

3. Ռոբերտ Հովհաննեսի Զարխիֆալաքյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Բաղրամյան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
4. Ռոբերտ Հովհաննեսի Զարխիֆալաքյանը պարտավոր է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Բաղրամյան համայնքի 900475054095 հաշվեհամարին վճարել 10000 (տաս հազար) ՀՀ դրամ տեղական վճար՝ շինարարության թույլտվություն տրամադրելու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 28

գ. Բաղրամյան